

Վ. Հ. ԳՈՂԻՔԱՆՅԱՆ

ՀԻՍՈՒՆ ՏԱՐՈՒՄ

Լենինի հանձարեղ ղեկավարությամբ իրականացված Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը հիմնովին փոխեց մարդկային հասարակության զարգացման ուղիները: Այդ անխուսափելի զարգացման հորդառատ, հզոր ու անսահման բազմակողմանի ընթացքի պատկերն է արտացոլում նաև Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության, նրա ներկայի ու ապագայի ամեն մի մեծ ու փոքր հատված: Այդ հատվածներից մեկն է հանդիսանում գիտությունը, մասնավորապես նրա կենսաբանական բնագավառը:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը 1920 թվականին Հայաստանում արտահայտվեց Նոյեմբերյան հեղափոխությամբ և սովետական կարգերի հաստատմամբ: Մեր պայմաններում՝ Հայաստանում, այդ հեղափոխությունը պատմականորեն օրինաչափ երևույթ էր, որը տեղի ունեցավ նաև որպես բախտորոշ իրողություն մի հնամենի աղբի համար, որը անխնայորեն բնաջնջվում էր և արդեն կանգնած էր կործանման եզրին: Զենքը ձեռքին օրհասական մարտի ելած ու արնաքամ եղող մի բուռ ժողովուրդը հենվեց Հոկտեմբերյան հեղափոխության հզոր աջին և դրանով իսկ փրկեց իր բեկորները:

Ահա այդպիսի դաժան բովով անցած փոքրիկ մի ժողովուրդ դարեր առաջ հենված լինելով ուսա մեծ ազգին, նրա հետ միասին մասնակից եղավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը և նրանից բխող այն զարգացմանը, որը այժմ շարունակում է ծավալվել արդյունաբերության, գյուղատնտեսության, կուլտուրայի ու գիտության ասպարեզներում:

Կենսաբանական գիտությունը ևս արտացոլում է մեր հանրապետության 50-ամյա զարգացման սկիզբը, զարգացման ընթացքը և ներկայումս գոյություն ունեցող դրությունը: Բնական է, որ հեղափոխությունն ստեղծեց նոր սոցիալական, հասարակական պայմաններ: Այդ նոր պայմաններում գիտության և մասնավորապես նրա կենսաբանական հատվածի ստեղծումն ու ծավալումը հրատապ պահանջ դարձավ:

Սովետական իշխանությունը առաջին հերթին ուշադրություն դարձրեց հեղափոխության տարիներին կրած վերքերի բուժմանը, ապա նախկին հասարակարգից ժառանգություն ստացած հետամնացության վերացմանը, նաև կոմունիստական հոգեբանության ու աշխատանքի շինարար, ստեղծարար, հանրագուտ դերի ըմբռմանը, և հայտնի է, որ մեծ արդյունքների հասավ այդ ամենի մեջ: Լենինյան կոմունիստական կուսակցության առաջադրած վեհապանծ խնդիրների լուծման համար ամենից առաջ հարկավոր էին կադրեր, որոնք համապատասխան պատրաստություն ունենային, որպեսզի կարողանային իրենց վրա վերցնել և լուծել նոր պրոբլեմներ, խնդիրներ, առօրյա հարցեր, ի

վիճակի լինելին գլխավորելու մեր աշխատավոր ժողովրդի այն մեծ ստեղծագործական ակտիվությունը, որը առաջացել էր Հոկտեմբերյան և նրա ծնունդ նույնմբերյան հեղափոխության տարիներին:

Մենք ունենինք ժողովրդի ծոցից ելած հին կադրեր, որոնք իրենց նվիրեցին սովետական իշխանության ու կոմունիստական կուսակցության առաջադրած սոցիալիստական շինարարության իրագործմանը Հայաստանում: Նրանք հմուտ աշխատողներ, մասնագետներ էին և արժանահիշատակ աշխատանք կատարեցին կենսաբանության ու գյուղատնտեսական գիտության բնագավառում: Այդ գործիչների պլեադայի մեջ են մտնում Հ. Գ. Հովհաննիսյանը (բիոքիմիկոս), Հ. Բ. Քալանթարյանը (ազրոքիմիկոս, միկրոբիոլոգ, գյուղատնտեսության խոշոր գիտակ), Տ. Պ. Մուշեղյանը (կենդանիների ֆիզիոլոգ), Մ. Գ. Թումանյանը (բուսաբույծ), Ա. Զ. Թամամյանը (անասնապահություն), Խ. Ա. Նրիցյանը (անասնապահություն), Գ. Փ. Գրծելյանը (խաղողագործ), Հ. Լ. Բեդելյանը (բույսերի ֆիզիոլոգ), Ա. Գ. Տեր-Պողոսյանը (կենդանաբան), Ս. Մ. Յուզբաշյանը (կենդանաբան), Ս. Դ. Աբովյանը (կաթնատնտես), Դ. Ի. Սոսնովսկին (բուսաբան), Ն. Ա. Տրոցկին (բուսաբան), Բ. Գ. Մասինոն (հելմինտոլոգ), Ս. Ա. Շչերբակովը (անասնապահություն); Ի. Ի. Կալուգինը (անասնապահություն), Ա. Հ. Քալանթարը (անասնապահություն, կաթնատնտեսություն), Ս. Ռ. Բաիրովներ (պատոլոգիական ֆիզիոլոգիա), Ս. Մ. Սմիրենսկին (գյուղ. կենդ. անատոմիա) և ուրիշներ:

Այս գործիչներն աշխատելով Երևանի պետական համալսարանում, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, Երևանի տնասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում, անգնահատելի գործ կատարեցին կադրերի պատրաստման ասպարեզում:

Բոլոր աշխատանքներն իրականացվում էին կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության կենտրոնական ու հանրապետական օրգանների ընդհանուր ծրագրերով, ղեկավարությամբ և ամենօրյա օգնությամբ: Այստեղից բխող ցուցումներով ղեկավարվելով, Հայաստանի բարձրագույն կրթական ու գիտահետազոտական հիմնարկները կապեր ստեղծեցին միութենական զանազան կենտրոնների հետ և նրանց օգնությունն ստացան նախ և առաջ կադրերի պատրաստման բնագավառում և զրա հետ միասին նաև գիտության զանազան ճյուղերի հիմնադրման ու զարգացման ասպարեզում: Այս կապակցությամբ պետք է հիշատակվեն կենսաբանության ասպարեզում աշխատող առանձին փայլուն դեմքեր և հիմնարկներ, որոնք առողջ բաբախյունով աշխատող սրտի դեր են կատարել ամբողջ Սովետական Միությունում և կենսաբար արյուն մղել նաև Սովետական Հայաստանում զարգացող կենսաբանության մեջ: Այդ գործիչների թվին են պատկանում հայտնի բուսաբան Վ. Լ. Կոմարովը, որը չերմությանը օժանդակել է բուսաբանության զարգացմանը նաև Հայաստանում, մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը, որը ողջ Սովետական Միությունում և ամբողջ աշխարհում ուղիներ է մշակել ֆիզիոլոգիայի զարգացման համար, շարունակելով իր մեծ նախորդների աշխատանքը այդ բնագավառում, Լ. Ա. Օրբելին՝ Պավլովի անմիջական զինակիցը, Ն. Ի. Վավիլովը՝ մեծ բուսաբույծը և գենետիկը, Ի. Վ. Միշուրինը՝ բուսական օրգանիզմների զարգացման ղեկավարման ասպարեզում լավագույն արդյունքների հասած մեծ բնախույզը և ուրիշ շատերը:

Այս բոլոր մեծ գիտնականները կադրեր են պատրաստել նաև մեր հանրապետության համար:

Կադրեր պատրաստվել են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև միութենական գիտական փալլուն օջախներում: Սրանց թվին են պատկանում Միութենական գիտությունների ակադեմիան իր կենսաբանական ինստիտուտներով, Համամիութենական բուսաբուծական ինստիտուտը, ՎԻՐ-ը՝ փալլուն բուսաբույծ Ն. Ի. Վավիլովի ղեկավարությամբ, Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիան, Մոսկվայի պետական համալսարանը և այլն:

Գիտության ու մանկավարժության այդ դարբնոցներում բազմաթիվ կադրեր կոփվեցին, որոնցից շատերը վերադարձան հայրենի ժողովրդի գիրկը՝ տեղում աշխատելու համար, շատերը չկարողացան վերադառնալ, ումանք էլ իրենց հանրապետությունից մեկնեցին միութենական գիտական կենտրոններ, սակայն նրանք սերտ կապեր պահպանեցին հայրենի ժողովրդի հետ և շարունակեցին ծառայել նրան բոլոր հնարավոր եղանակներով: Դրանց թվին էին պատկանում Խ. Ս. Կոշտոյանցը և Ն. Մ. Սիսակյանը: Դրանց թվին են պատկանում նաև այժմ ակտիվ գործնեություն ծավալող Ե. Հ. Հասարթյանը, Ա. Լ. Բախտաջյանը, Մ. Ք. Չալլախյանը, Ա. Ի. Քարամյանը, Մ. Ե. Տեր-Մինասյանը, Պ. Պ. Ղամբարյանը և ուրիշներ: Կային և զրսից եկած գիտնականներ, որոնք երկար տարիների ընթացքում աշխատեցին Հայաստանում: Դրանցից էին՝ տաղանդավոր կենսաբան Անդրեյ Անդրեևիչ Ռիխտերը, որը փոխադրվեց Լենինգրադ, մյուսը բուսաբան Գևորգի Դենիսովիչ Յարոշենկոն էր, գիտությունների գոկտոր, հմուտ պրոֆեսոր, որը մինչև իր կյանքի վերջը աշխատեց Հայաստանում:

Գտնվեցին նաև այլ գիտնականներ, որոնք մեկնեցին Միության այլ վայրեր, չկարելով կապերը մեր հանրապետության հետ: Դրանցից են բուսաբաններ Անրեյ Ալեքսանդրովիչ Ֆեդորովը, Պավել Դենիսովիչ Յարոշենկոն, Անդրեյ Ալեքսևիչ Յացենկո-Խմելևսկին, Լուարսաբ Բորիսովիչ Մախատաձեն, կենդանաբաններ Սերգեյ Կոնստանտինովիչ Դալը, Իլյա Սերգևիչ Դարևսկին և ուրիշներ:

Այսպիսով, կուսակցության և կառավարության առաջադրմամբ պետք է լուծվեր կադրերի հարցը տեղում և միութենական կենտրոններում: Եվ այդ հարցը լուծվեց լայն մասշտաբներով, տեկելով մեկ տասնյակ տարի՝ 1920 — 1930 թթ.:

Մեր սովետական հայրենիքը այդ շրջանում առաջին հերթին զբաղված էր հզոր ծանր արդյունաբերություն զարգացնելու գործով: Մինչև զարգացման այդ տարիները գյուղը գյուղատնտեսական մեքենաներ էր պահանջում և չէր ստանում, իսկ այդ շրջանի վերջին տարիներում երևում էին ծանր արդյունաբերության հզորացման նշանները և գյուղատնտեսությունը պետք է համապատասխան ձևով վերակառուցվեր՝ տարեցուտարի զարգացող արդյունաբերության հետ համընթաց քայլելու համար: Պետք է ուժեղանային նաև գյուղատնտեսական և կենսաբանական գիտությունները, որպեսզի կարողանալին լուծել տնտեսական հեղափոխության առաջադրած հարցերի մաթողջ բարդ կոմպլեքսը: Այդ արդեն սկիզբն էր գիտության զարգացման երկրորդ շրջանի՝ մեր հանրապետությունում:

Գիտության զարգացման հիշյալ առաջին շրջանում գործում էր միայն 1920 թվականին հիմնադրված Երևանի պետական համալսարանը, որը կադրեր

էր պատրաստում նաև կենսաբանության ու գյուղատնտեսության գծով, փոքր չափերով գիտահետազոտական աշխատանքներ կատարում իր գյուղատնտեսական ֆակուլտետի ամբիոններում: Այդ նույն ժամանակաշրջանում Հայաստանի լուսավորության մինիստրության կեց կազմակերպվել էր Հայաստանի բնապատմական թանգարանը, որտեղ հավաքածուներ էին ստեղծվում հանրապետության բուսական և կենդանական աշխարհների վերաբերյալ (հմուտ բնախույզ Ա. Բ. Շելկովնիկովի ղեկավարությամբ): 1923 թվականին կազմակերպվել է Սևանի հիդրոբիոլոգիական կայանը, որը շարունակում է իր օգտակար աշխատանքը մինչև այսօր: Բացի դրանից, կային փոքր կայաններ, որոնք զբաղվում էին կոնկրետ բուսաբուծական հարցերով: Կարևոր աշխատանք էր կատարվում նաև բժշկական գիտությունների գծով, գերազանցապես պետական համալսարանի բժշկական ֆակուլտետի ամբիոններում և մի քանի կայաններում (մալարիայի ու համաճարակային այլ հիվանդությունների դեմ պայքարի գծով և այլն):

Այսպիսով, գիտության զարգացման առաջին շրջանը բնորոշվում է կադրերի պատրաստմամբ, որը, իհարկե, շարունակվեց այնուհետև ևս, և ավելի բարձր մակարդակով: Այդ շրջանում գիտահետազոտական հիմնարկների թիվը շատ փոքր էր:

Մեզ մոտ կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունների զարգացման երկրորդ շրջանն սկսվեց 1930-ական թվականներից: Ասվեց, որ Կոմունիստական կուսակցության կամքով ու ամենօրյա ղեկավարությամբ հսկական աշխատանք կատարվեց, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը արդյունաբերության բնագավառում արտահայտվեց որպես ծանր արդյունաբերության արագընթաց զարգացում, ժողովրդական մասսաների բոլշևիկյան մոբիլիզացիա, գյուղատնտեսության բնագավառում այդ հաղթանակը տեղի ունեցավ որպես գյուղատնտեսության կոլեկտիվացում: Այս հիման վրա դրվում էին նոր խնդիրներ, որոնց լուծման համար արդեն ստեղծված և ավելի արագ թափով ստեղծվող կադրերը պետք է միավորվեին, ուստի այդ կապակցությամբ սկսեցին կազմակերպվել գիտահետազոտական հիմնարկներ:

Այսպիսով, այս բնագավառի գիտությունների զարգացման երկրորդ շրջանը բնորոշվեց գիտական կոլեկտիվների՝ գիտահետազոտական հիմնարկների կազմակերպմամբ: Այս շրջանը մեզ մոտ տևեց մինչև 1943 թ., ընդհուպ մինչև գիտությունների ակադեմիայի և զանազան այլ գիտական օջախների կազմակերպումը մեր հանրապետությունում: Հասկանալի է, որ այդ պրոցեսը սկիզբ առնելով 30-ական թվականներին, շարունակվեց ոչ միայն մինչև հանրապետության գիտությունների ակադեմիայի ու այլ գիտական հիմնարկների կազմակերպումը, այլև տեղի ունի և տեղի է ունենալու մշտապես՝ համաձայն մեր երկրի սոցիալիստական-կոմունիստական շինարարության պահանջների:

Գիտության զարգացման այս երկրորդ շրջանում ակտիվ կերպով հանդես եկավ Սովետական Միության գիտությունների ակադեմիան, որը իրականացնելով կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի ցուցումները, նպաստեց գիտության զարգացմանը Սովետական Միության հանրապետություններում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում: Այդ արտահայտվեց Հայաստանում Միութենական գիտությունների ակադեմիայի Հայաստանի ֆիլիալի (ԱրմՖԱՆ-ի) կազմակերպմամբ՝ 1935 թվականին: ԱրմՖԱՆ-ի առաջին նախագահ հանդիսացավ ակադեմիկոս Լևինսոն-Լեսինգը: Նա դրական դեր

խաղաց, բայց կարճ ժամանակ աշխատեց: ԱրմՖԱՆ-ի աշխատանքներում աշխուժություն մտցրեց նրա նոր նախագահը՝ ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին, որը այդ պաշտոնն ստանձնեց 1938 թվականին: Նույն ժամանակ որպես ֆիլիալի նախագահի տեղակալ սկսեց ակտիվորեն և մեծ նախաձեռնությամբ աշխատել հետազայում Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Սահակ Կարապետի Կարապետյանը:

ԱրմՖԱՆ-ը փոքր հիմնարկություն էր, և բաղկացած էր հասարակագիտական, կենսաբանական և քիմիական ինստիտուտներից: Կենսաբանական ինստիտուտի մեջ էին մտնում բուսաբանության սեկտորը, որի կազմակերպման համար հիմք հանդիսացավ Հայաստանի բնապատմական թանգարանի բուսաբանական մասը: Այս սեկտորը կազմակերպեց Երևանի բուսաբանական այգի, որի հիմնադրման վայրը ընտրեց մի հանձնաժողով՝ բաղկացած ակադեմիկոս Ն. Ի. Վավրիլովից, խոշոր բուսաբաններ Դ. Ի. Սոսնովսկուց և Ն. Ա. Տրոիցկուց: Բուսաբանական այգու կազմակերպման համար մեծ ջանքեր թափեց գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե. Ս. Ղազարյանը, աշխատակցությամբ Զ. Ա. Աստվածատրյանի և այլոց, որոնք հիշատակված են «За дваццать лет» հոդվածում (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, կենսաբանական գիտություններ, XVII, № 1, 1964 թ.):

Նույն ինստիտուտի կազմում ձևավորվեց կենդանաբանության սեկտորը, որի հետազոտությունների հիմք հանդիսացան բնապատմական թանգարանի կենդանաբանական հավաքածուները, որոնք ավելի հարստացան սեկտորի կազմակերպած բնախուղական արշավանքների շնորհիվ:

Նույն ինստիտուտի կազմում գործում էր նաև միկրոբիոլոգիայի մի ոչ մեծ լաբորատորիա:

Կենսաբանական ինստիտուտի խոշոր միավորներից էր նաև Բույսերի և գյուղատնտեսական կենդանիների զենետիկայի սեկտորը, որտեղ կատարվում էին զենետիկական, սելեկցիոն, բջջաբանական հետազոտություններ:

1943 թվականին, Հայրենական մեծ պատերազմի օրերին ՍՄԿԿ ԿԿ որոշում ընդունեց Հայաստանում գիտությունների ակադեմիա կազմակերպելու վերաբերյալ, որը մի մասն էր այդ տարիներին իրականացվող նման ձեռնարկումների: Սովետական Միությունը ծանր պատերազմ վարելով անարգ թշնամու դեմ, իր մեջ ուժ գտավ իրականացնելու նախատեսված կուլտուրական շինարարության ծրագրերը, այդ թվում նաև գիտության զարգացման ծրագրերը: Հայաստանի գիտությունների ակադեմիան կազմակերպվեց 1943 թ. նոյեմբերին: Նրա առաիժն պրեզիդենտը հանդիսացավ մեծատաղանդ բանասեր ակադեմիկոս Իոսիֆ Աբգարի Օրբելին, առաջին տեղակալը՝ նույնպես մեծատաղանդ աստղաֆիզիկոս, Միութենական ԳԱ թղթակից-անդամ Վիկտոր Համադասպի Համբարձումյանը, որը Հայաստանի ԳԱ պրեզիդենտ ընտրվեց հաջորդ ընտրական շրջանում: Այդ ժամանակ Ի. Ա. Օրբելին տեղափոխվել էր Լենինգրադ՝ շարունակելու էրմիտաժի դիրեկտորի պաշտոնը: Նա շափազանց ջերմ հեռագրով շնորհավորեց իրեն փոխարինող նորընտիր պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանին և հաջողություններ մաղթեց նրան:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի բաժանմունքների թվում տեղ գտան նաև կենսաբանական գիտությունների և գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքները: Առաջինի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՍՍՀՄ թղթակից-անդամ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական

անդամ Խ. Պ. Կոշտոյանցը, երկրորդին՝ Հայաստանի ԳԱ իսկական անդամ Մ. Գ. Թումանյանը: Այս երկու բաժանմունքների կազմի մեջ ընդգրկվեցին հանրապետության համապատասխան հիմնական գիտահետազոտական հիմնարկությունները և գիտնականները:

Հիշյալ երկու բաժանմունքներում կենտրոնացվեցին կենսաբանության և գյուղատնտեսության գծով հանրապետությունում կատարվող աշխատանքները: Դրա հետ միասին զարգացան հետազոտությունները նաև այլ հիմնարկներում, ամենից առաջ բարձրագույն կրթական հիմնարկներում՝ Երևանի պետական համալսարանում, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում, Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում և Երևանի բժշկական ինստիտուտում:

Սրանով կենսաբանական և գյուղատնտեսական գիտությունները հիմնականում անցան իրենց զարգացման երկրորդ փուլը, որի մեջ հատկանշականը գիտական հիմնարկների, գիտական կոլեկտիվների ձևավորումն էր: Այս հնարավորություն տվեց գիտությունը արագ զարգացնելու ինչպես տեսական հարցերի մշակման բնագավառում, այնպես էլ գործնական հարցերի լուծման գծով: Այս չի նշանակում, որ գիտության բնագավառում վերացան բոլոր թերությունները: Թերություններ շատ են եղել, որոնք հետքեր են թողել գիտության զարգացման վրա, հանվել օրակարգից և միաժամանակ առաջացել են նորերը: Գիտության զարգացման այդ հակասությունները անխուսափելի են եղել, նրանք զարգացման հատկանիշներ են հանդիսացել և բնորոշել են թերությունների բնույթն ու նրանց վերացման միջոցները:

Հիմնականը գիտության հասունացումն է: Դրա շնորհիվ նա ինքն է իր առջև տեսական ու գործնական պարտականություն դնում և հաճախ հաջողությամբ լուծում, հաճախ արտադրությունը, պլանային տնտեսությունն են նրան խնդիրներ առաջադրում և ստանում նրանց լուծումը: Սրանով իսկ գիտությունը մտնում է արտադրական ուժերի զարգացման մեջ և դառնում այն բնագավառներից մեկը, որը իր ստացած միջոցները վերադարձնում է տնտեսությանը բազմապատիկ չափերով: Այստեղից, որպես կանոն, բխում է, որ գիտահետազոտական հիմնարկների կազմակերպումը և նրանց նյութական միջոցների տրամադրումը օգտաբեր է: Ահա այդ է հիմքերից մեկը այն բանի, որ այժմ կենսաբանական ու գյուղատնտեսական գիտություններն ունեն բավական մեծ ցանց և ավելի ընդարձակվելու տենդենցներ:

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում այժմ գործում են հետևյալ գիտահետազոտական հիմնարկությունները. Բուսաբանության ինստիտուտ՝ Երևանի բուսաբանական այգով և նրա բաժանմունքներով Կիրովականում ու Սեանում, Կենդանաբանության ինստիտուտ, Միկրոբիոլոգիայի ինստիտուտ, Ագրոքիմիական պրոբլեմների և հիգրոպոնիկայի ինստիտուտ, Մարզու և կենդանիների ֆիզիոլոգիայի ինստիտուտ, Փորձարարական կենսաբանության ինստիտուտ, Սեանի հիգրոբիոլոգիական կայան, Նեյրոբիոնիկայի լաբորատորիա, Տեսողական ռեցեպցիայի լաբորատորիա, Բույսերի մուտագենեզի լաբորատորիա:

Այս ինստիտուտների և նրանց գիտական աշխատողների մասին այստեղ տեղեկություններ չեն բերվում: Այդ մասին որոշ տեղեկություններ կարելի է քաղել «За двадцать лет» հոդվածից. (ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, կենսաբանական գիտություններ, XVII, № 1, 1964 թ.): Այդ տեղեկություններն զգալի լրացումների կարիք ունեն, որ թերևս կարելի է քաղել այժմ հրատարակության պատ-

րաստվող «Հայաստանի գիտությունների ակադեմիան 50 տարում» ժողովածուից:

ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության համակարգում աշխատում են մի շարք գիտահետազոտական հիմնարկներ՝ իրենց բազմաթիվ գիտական աշխատակիցներով, որոնք կենսաբանության և գյուղատնտեսության համար շատ կարևոր հարցեր են լուծում: Այդ գիտական հիմնարկությունները հետևյալներն են. Երկրագործության ինստիտուտ, Այգեգործության, գինեգործության և պտղաբուծության ինստիտուտ, Բանջարաբուսության ինստիտուտ, Բույսերի պաշտպանության ինստիտուտ, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտ, Հողագիտության և ագրոքիմիայի ինստիտուտ, Գյուղատնտեսության մեքենայացման ինստիտուտ, Զրային պրոբլեմների և հիդրոտեխնիկայի գիտահետազոտական ինստիտուտ, Անասնաբուծության և անասնաբուժության գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստանի անասնաբուծության և անասնաբուժության ինստիտուտ:

Երբ ԳԱ կենսաբանական գիտությունների գծով աշխատող հիմնարկները կազմակերպական ու նյութական կարողությունների տեսակետից համեմատում ենք գյուղատնտեսության մինիստրության համակարգում գործող հիմնարկների հետ, ապա գալիս ենք այն եզրակացության, որ երկրորդները ավելի հզոր են: Այս ինստիտուտները ավելի մեծ գործնական արդյունքներ են տալիս արտադրությանը և ավելի մոտ են կանգնած նրա պահանջներին: Միաժամանակ նրանք լուծում են հետաքրքրական գիտական խնդիրներ: Այսպես, հետազոտության խնդիր են հանգիստանում բույսերի հատկանիշների ու հատկությունների ժառանգականության պարզաբանումը, ծնողական ձևերի ընտրությունը, հիբրիդացման եղանակների ուսումնասիրությունը, հետերոզիսի, լետալության և դեպրեսիվության գենետիկական հետազոտությունը, բույսերի բիոֆիզիկայի հարցերը, բուսական օրգանիզմների ձևագոյացման երևույթների պարզաբանումը բնության մեջ, բույսերի նոր սորտերի ստացումը, բույսերի վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարի հիմունքների մշակումը, հողատիպերի ուսումնասիրությունը և նրանց պարարտացման ուղիները, հողի մեկիտրացիայի հիմունքների պարզաբանումը, անասունների ցեղերի ստացումը, մթերատվության հատկանիշների ժառանգման պարզաբանումը և այլ:

Գիտությունների ակադեմիայի կենսաբանական գիտահետազոտական հիմնարկները գերազանցապես ուսումնասիրում են տեսական-գիտական հարցեր, որոնք հայտնի են և տեղ են գտել մամուլում: Սակայն վերջին տարիների ընթացքում նրանց գործունեության մեջ առաջացել են լուրջ տեղաշարժեր դեպի գործնական արժեք ունեցող արդյունքների ստացումը: Այդ տեղի է ունեցել ԳԱ նախագահության և հատկապես ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի հետևողական պահանջով: Այսպիսով, գործնական շատ կարևոր նշանակություն ունեն անտառագիտությանը վերաբերող արդյունքները, բույսերի անհատական զարգացման ուղղությամբ ստացված տվյալները, գյուղատնտեսական կենդանիների, մասնավորապես ոչխարների հելմինթոզի դեմ պրոֆիլակտիկական եղանակի լայն կիրառումը, աճման ու զարգացման խթանիչ նյութերի կիրառումը բուսաբուծության մեջ, ինսեկտիցիդների ստացումը միկրոբիոլոգիական եղանակով և նրանց փորձարկումը, չոր նիտրագինի ստացումը, արդյունաբերական բուսաբուծության ուղիների մշակումը և հիդրո-

պոնիկական ջերմատների ու կանաչ կերի հիդրոպոնիկական արտադրությունը, վարդագույն խորդենու արդյունաբերական եղանակով մշակումը, հավերի ցեղի ստացումը ծնողական կոմպոնենտների նպատակադիր ընտրության միջոցով, հավերի մաստվական և ձվատվական հատկությունների խթանումը ֆիզիոլոգիական եղանակներով:

Այն, որ Գյուղատնտեսության մինիստրության գիտահետազոտական հիմնարկները գործնական արդյունքներ են ստանում՝ կատարելով գիտական հետազոտություններ և Գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկները տեսական ուսումնասիրություններ են կատարում՝ իրենց տեսադաշտի մեջ պահելով գործնական արդյունքների ստացումը, օրինաչափ է: Թվում է, թե կարելի է արձանագրել սահմանների վերացման տենդենցները այդ երկու սիստեմների միջև: Մի բան միանգամայն պարզ է, որ գործնական հարցերի պարզաբանմանը առնչվող գիտական հիմնարկները անշեղորեն, թերևս դանդաղ, դարձել են, կամ դառնում են, արտադրական ուժերի զարգացման օղակներ:

Եվ ահա, գիտության զարգացման երրորդ փուլն է այս, ներկայումս զարգացող փուլը: Այս փուլին հատուկ է կազմակերպական դինամիզմը, որը պայմանավորվում է այն նորանոր պահանջներով, որ առաջադրում է սոցիալիստական շինարարությունը՝ արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Հարցն ավելի է բարդանում այն բանի հետևանքով, որ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը պետք է բավարարեն մարդու կենսական պահանջմունքները, որոնք արագորեն ավելանում են նախ իրենց մակարդակով, ապա մարդկության թվի հարաճյուն բարձրացմամբ: Այս պահանջմունքների լիակատար և սոցիալիստական բավարարումը կարելի է սպասել միայն սոցիալիզմի-կոմունիզմի հաղթանակի դեպքում, սակայն կապիտալիզմը այսօր արդեն քաղցի է մատնել մարդկության հոծ զանգվածներ, իսկ որպես դրա տրամաբանական զարգացում կարող է հնարավոր համարել երկրագնդի բնակչության որոշակի մասի ոչնչացում:

Սրանով կարելի է բացատրել գիտությունը արտադրողական ուժերի վերածելու գիծը և այն կազմակերպական դինամիզմը, որին մենք ականատես ենք նաև մեզ մոտ, ըմբռնում ենք նրա ազնիվ շարժառիթները և հնարավորին չափ պատկերացնում նրա զարգացման օբյեկտիվ պատճառները:

Կենսաբանական գիտությունները մեղ հանրապետությունում ևս զարգացել և զարգանում են, անցնելով որոշ աստիճաններ: Առաջին աստիճանը հավաքողականությունն է, նկարագրությունը, դասակարգումը և դրա հիման վրա որոշ օրինաչափությունների սահմանումը: Կենսաբանական գիտությունների այդ աստիճանը, որը մեծագույն նվաճումների է հասել, պահպանում է իր նշանակությունը և պահպանելու է, քանի գոյություն ունի բնական միջավայրը իր կենդանական, բուսական աշխարհներով, նրանց հատուկ հարատև փոփոխություններով: Գիտական միտքը և ոչ մի օր չի կարող դադարեցնել իր ջանքերը այդ ասպարեզում: Բնությունը և նրա փոփոխությունները որքան հավերժական են, այնքան էլ հավերժական պետք է լինի նրանց ուսումնասիրությունը:

Առաջին աստիճանի անմիջական շարունակությունն է կենսաբանության երկրորդ, ավելի բարձր աստիճանը, երբ գիտական միտքը առանձնակի ուշադրություն է դարձնում օրգանիզմների հետ տեղի ունեցող արտաքին ու ներքին երևույթների հայտնաբերման և նրանց պատճառների բացահայտման, բացատրության վրա:

Կենսաբանական երևույթների ուսումնասիրության երրորդ աստիճանը հանդիսանում է օրգանիզմների զարգացման ղեկավարումը: Սա կենսաբանա-

կան գիտությունների զարգացման ամենաբարձր աստիճանն է: Թեև ակոխելով այս աստիճանը, կենսաբանական գիտությունը չէր կարող բավարարվել ուսումնասիրությունների այն մեթոդներով, եղանակներով, որոնք սահմանափակվում էին մորֆոլոգիական, անատոմիական, սիստեմատիկական, գենետիկական-բջջաբանական, սաղմնաբանական, էկոլոգիական, ցենոլոգիական և այլ ուղղություններով, այս դեպքում ևս երևան բերելով երևույթները և բացատրելով նրանց պատճառները: Այդ եղանակները այժմ ևս անհրաժեշտ են, սակայն նրանցով բավարարվել չէր կարելի: Ուստի պետք է անհրաժեշտություն ծագեր, և ծագեց՝ կենսաբանական ուսումնասիրությունների բաղկացուցիչ մասը դարձնել օրգանիզմների ղեկավարման պրոբլեմը, ելնելով մարքսիստական այն դրույթից, որ խնդիրը միայն բացատրելը չէ, այլև վերափոխելը: Պետք է հիշել, որ գործնական կյանքը այդ գծով էլ զնացել է իր ամենօրյա կենսական պահանջները հոգացող մարդկային հասարակությունը, նրա իմաստունները, այդպես էլ վարվել են և եթե չլիներ այդ, մենք բուսաբուծության ու անասնաբուծության մեջ չէինք ունենա բազմաթիվ սքանչելիքներ, որոնցով վաղուց ի վեր հայտնի է նաև Հայաստանը: Գիտության որոշ ճյուղեր՝ գենետիկական, սեյսեկցիան, միկրոբիոլոգիան, ագրոբիմիան և այլն, միշտ նկատի են ունեցել օրգանիզմների ղեկավարման պրոբլեմը: Սակայն այդ գիտությունները բավականաչափ տվյալներ ունենալով օրգանիզմներին շրջապատող միջավայրի վերաբերյալ, անհրաժեշտ տվյալներ չեն ունեցել օրգանիզմների զարգացման ներքին պրոցեսների մասին: Այդ հարցի լուծմանը ծառայել են կենսաբանական գիտության մի շարք ուղղություններ, առաջին հերթին՝ բջջաբանությունը, սաղմնաբանությունը, գենետիկան, բիոքիմիան և այլն: Վերջին երկու տասնամյակի ընթացքում ծագել է մոլեկուլյար կենսաբանությունը, որը խոստանում է հեղափոխություն մտցնել կենդանի օրգանիզմների զարգացման ներքին մեխանիզմների պատկերացման մեջ և նրանց վերափոխման հզոր հիմք դառնալ: Մեր հանրապետության պայմաններում մոլեկուլյար կենսաբանությունը ուշ է սկսել զարգանալ, սակայն, անշուշտ, մեր նվաճումներից է նրա հիմնադրումը մեզ մոտ:

Այժմ շատ հակիրճ նշենք կենսաբանության հիմնական ուղղություններից մի քանիսը, որոնք այսօր զարգանում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում և ունեն ընդհանուր գիտական նշանակություն:

Բուսաբանության ինստիտուտի (գիրեկտոր՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. Ղազարյան) շատ արժեքավոր աշխատանքներից է «Հայաստանի ֆլորան» աշխատությունը, որը իրականացվում է ՍՍՀՄ և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիաների թղթակից-անդամ Ա. Լ. Թախտաջյանի ղեկավարությամբ:

Կարևոր հետազոտություններ են կատարվում ֆոտոսինթեզի և բույսերի անհատական զարգացման պրոբլեմի մշակման ուղղությամբ (ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Հ. Ղազարյան):

Կենդանաբանության ինստիտուտը (գիրեկտոր՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Ա. Հ. Զիլինգարյան) լուրջ աշխատանք է կատարում Հայաստանի ֆաունայի ուսումնասիրության բնագավառում, հաջորդաբար լույս են տեսնում «Հայաստանի ֆաունան» արժեքավոր մենագրությունները: Կարևոր է գյուղատնտեսական կենդանիների հելմինթոզի ուսումնասիրությունը (ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ է. Հ. Դավթյան):

Միկրոբիոլոգիայի ինստիտուտը (գիրեկտոր՝ կենսաբանական գիտությունների թեկնածու է. Գ. Աֆրիկյան) մշակում է միկրոօրգանիզմների ֆիզիոլո-

գիայի և բիոքիմիայի պրոբլեմը, լուրջ ջանքեր է թափում զարգացնելու միկրոբիոլոգիական արդյունաբերության ճյուղերը: Այս ինստիտուտի աշխատանքներին ակտիվ կերպով մասնակցում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՍՍՀՄ թղթակից-անդամ Մ. Բ. Չալախյանը:

Ագրոքիմիական սլոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը (ղիրեկտոր՝ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյան) հետաքրքրական հետազոտություններ է կատարում արդյունաբերական բուսաբուծության զարգացման բնագավառում, ագրոքիմիական գիտության զարգացման հարցերը լուծելով այդ ֆոնի վրա:

Լ. Ա. Օրբելու անվան ինստիտուտը (ղիրեկտոր՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ս. Ա. Բակունց) լուծում է նեյրոնի ու սինապտիկ հաղորդման ֆիզիոլոգիայի, գլխուղեղի ընդհանուր ֆիզիոլոգիայի, վեգետատիվ նյարդային համակարգության ու կեղև-ընդերային փոխհարաբերությունների ֆիզիոլոգիայի և գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիայի պրոբլեմները: Այս պրոբլեմների մշակումը տեղի է ունենում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյանի, թղթակից-անդամներ Ս. Ա. Բակունցի, Վ. Վ. Ֆանարջյանի և մի շարք ակտիվ ֆիզիոլոգների ղեկավարությամբ: Այս ինստիտուտի հետ ջերմ, ստեղծագործական կապեր են պահում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Է. Հ. Հասրաթյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ի. Քարամյանը:

Փորձարարական կենսաբանության ինստիտուտը (ղիրեկտոր՝ բժշկական գիտությունների թեկնածու Ս. Ա. Ճշմարիտյան) Հայաստանում հանդիսանում է այն կենտրոնը, որտեղ վերջին տարիների ընթացքում մշակվում են մոլեկուլյար կենսաբանության հարցերը: Այս աշխատանքների սկզբնավորման գործում մեծ դեր խաղաց կենսաբանական գիտությունների դոկտոր Ա. Ի. Ալիսանյանը:

Կենսաբանական հնագույն հիմնարկներից է Սևանի հիդրոբիոլոգիական կայանը (ղիրեկտոր՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Ա. Գ. Մարկոսյան): Մեր այսօրվա գիտական և գործնական ինֆորմացիան Սևանի լճի և նրա կենդանական աշխարհի վերաբերյալ բխում է այդ հիմնարկից: Այս հիմնարկը իր հետազոտած գիտական տվյալներով լուրջ օգնություն է ցույց տալիս հանրապետության պարտիական և կառավարական օրգաններին, որոնք մեծապես մտահոգված են Սևանա լճի կյանքով:

Հետաքրքրական աշխատանքներ են կատարում իրենց բնագավառներում նեյրոբիոնիկայի լաբորատորիան (վարիչ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Լ. Ս. Ղամբարյան), տեսողական ռեցեպցիայի լաբորատորիան (վարիչ՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Հ. Գ. Դեմիրչոզյան), բույսերի ինդուկցված մոտագեննեզի լաբորատորիան (վարիչ՝ կենսաբանական գիտությունների թեկնածու Վ. Ա. Ավագյան):

Այստեղ մենք չենք անդրադառնում այն շատ մեծ աշխատանքներին, որոնք կատարվում են բազում բնագավառներում՝ հանրապետության բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկներում:

Բերված հակիրճ տվյալները ցույց են տալիս, թե ինչից է սկսել գիտությունը մեզ մոտ իր զարգացումը և ինչի է հասել այսօր, երբ իր գոյության ու ստեղծագործական աշխատանքի 50-ամյակն է նշում մեր հանրապետությունը՝ Հայաստանը:

Իրոք, փառավոր է մեր հանրապետության և նրա գիտության անցած ուղին և Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ու Նոյեմբերյան հեղափոխության ճաճանշափալ լույսով է լուսավորված նրա ապագան: